UNHCR
The UN Refugee Agency

Օգտակար տեղեկություններ
Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների, փախստականների և բռնի տեղահանված այլ անձանց համար

ՄԱԿ ՓԳՀ-ի և գործընկեր կազմակերպությունների կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն ԱՆՎՃԱՐ են

ՄԱԿ ՓԳՀ անվճար թեժ գիծ՝ 0 8000 0025
ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի գրասենյակ՝
armyeprt@unhcr.org, armyecomplaint@unhcr.org
Գլխավոր տեսուչի գրասենյակ՝ inspector@unhcr.org

ՄԱԿ ՓԳՀ-ն պահպանում է իրեն ուղղված բոլոր հաղորդումների գաղտնիությունը:

Հայաստանում ապաստան հայցողների, փախստականների և բռնի տեղահանված այլ անձանց առնչվող օգտակար տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ հղումով՝ https://help.unhcr.org/armenia/:

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան 2024

1993 թ. հուլիսին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան և դրան կից 1967 թ. արձանագրությունը: 1994 թվականին ՀՀ-ն վավերացրել է 1954 թ. Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիան և 1961 թ. Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիան: 2008 թվականին ՀՀ-ն ընդունել է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը, որը կարգավորում է բռնի տեղահանված և քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերող հարցերը:

ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունը Հայաստանում

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի գործունեությունը Հայաստանում մեկնարկել է 1992 թվականին: Մենք աշխատում ենք Հայաստանի Հանրապետության իշխանությունների, ոչ պետական և այլ կազմակերպությունների, կամավորական ցանցերի և փախստականների համայնքների հետ՝ ապահովելու փախստականների և ապաստան հայցողների պաշտպանությունն ու ինտեգրումը երկրում, ինչպես նաև վերացնելու ապաքաղաքացիությունը: Մենք նաև կենտրոնանում ենք իրազեկության ընդլայնման և շահերի պաշտպանության շուրջ՝ գտնելու հարակայուն լուծումներ և բարելավելու գործող քաղաքականությունները, որպեսզի բռնի տեղահանված անձինք կարողանան զարգանալ իրենց նոր միջավայրում:

Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի գործունեության հիմնական նպատակների թվում են ՀՀ տարածք մուտքի հասանելիության և ընդունելության պայմանների մշտադիտարկումը, արդյունավետ և անձանց պաշտպանության կարիքների նկատմամբ զգայուն ապաստանի համակարգի հասանելիության առաջմղումը, կայուն լուծումների և տեղական ինտեգրման հնարավորությունների խթանումը, փախստականների և ապաստանի հարցերի վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացումը, ապաքաղաքացիության վերացումը:

Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի գործունեության հիմնական տեսակները հետևյալն են.

- Փախստականների հիմնախնդիրների արձագանքմանն աջակցելու համար մարդասիրական ջանքերի ղեկավարում և համակարգում,
- Ապաստանի արդյունավետ համակարգի և օրենսդրության պաշտպանության խթանում,
- Փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ապահովում,
- Ինքնաբավության և տեղական ինտեգրման խթանում,
- Ապաքաղաքացիության կրճատում ու կանխարգելում,
- Առավել խոցելի փախստականներին և ապաստան հայցողներին օգնության տրամադրում,
- Փախստականների պաշտպանության գործում ներգրավված պետական պաշտոնյաների, կառույցների, հասարակական կազմակերպությունների կարողությունների հզորացում:

Ծանուցում. *Խնդրում ենք նկատի ունենալ, որ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը չի ընդունում որևէ դիմում և չի իրականացնում որևէ ընթացակարգ՝ Հայաստանի Հանրապետությունից այլ երկրներ մեկնելու համար:*

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱԿ ՓԳՀ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանանց Աջակցման Կենտրոն

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

ACTION AGAINST HUNGER

Խնդրում ենք հաշվի առնել, որ աջակցություն ստանալու չափանիշներին բավարարումը որոշվում է՝ ելնելով յուրաքանչյուր դեպքից և կոնկրետ իրավիճակից: Օժանդակություն և աջակցություն ստանալու համար խնդրում ենք կապ հաստատել ստորև ներկայացված կազմակերպությունների հետ:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (ՄՔԾ)

ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը Ներքին գործերի նախարարության կառուցվածքում գործող պետական լիազորված մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը միգրացիայի, ապաստանի և քաղաքացիության ոլորտներում:

Գործունեության շրջանակը

- Ապաստանի հայցի ընդունում և քննում,
- Փախստականի կարգավիճակի տրամադրում,
- Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի և այլ փաստաթղթերի տրամադրում,
- Կառավարության ծառայությունների և օժանդակության ծրագրերի վերաբերյալ խորհրդատվություն,
- Քաղաքացիություն ստանալու համար դիմումների ընդունում:

Ք. Երևան, 0015,
Թաիրովի փ., շ. 14

www.migration.am

+374 11 275 015
+374 33 275 024

smsasylum@gmail.com

Մարդու իրավունքների պաշտպան (Օմբուդսմեն)

ՄԻՊ-ն անկախ պետական պաշտոնատար անձ է, որը հետևում է պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Պաշտպանը նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:
Յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ ապաստան հայցող անձը և փախստականը, ունի վերոնշյալ կառույցների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում ՄԻՊ-ի աջակցությունն ստանալու իրավունք: Անհատները կարող են դիմել ՄԻՊ-ին ինչպես անձամբ, այնպես էլ իրենց ներկայացուցիչների միջոցով՝ գրավոր կամ բանավոր:

Գործունեության շրջանակը

- Երկրում մարդու իրավունքների վիճակի մշտադիտարկում,
- Զեկույցների տրամադրում միջազգային կառույցներին,
- Իրավունքների խախտման վերաբերյալ բողոքների ընդունում,
- Իրավաբանական աջակցություն և խորհրդատվության տրամադրում,
- Խորհրդատվության տրամադրում պետական կառույցներին,
- Հետազոտությունների, առաջարկությունների, կարծիքների հրապարակում,
- Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանների աշխատանքին,
- Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ,
- Մարդու իրավունքների մասին վերապատրաստումների տրամադրում,
- Իրազեկման միջոցառումների իրականացում:

Ք. Երևան 0002,
Պուշկինի 56ա

www.ombuds.am

ombuds@ombuds.am

+374 10 537 651,
+374 96 116 100

Կանանց աջակցման կենտրոն ՀԿ

Կանանց Աջակցման Կենտրոն

Կանանց աջակցման կենտրոնը աշխատում է բոլոր այն կանանց և նրանց երեխաների հետ, որոնք բախվել են ցանկացած տեսակի ընտանեկան բռնության՝ անկախ սոցիալ-տնտեսական վիճակից և կրթական մակարդակից, ներառյալ՝ փախստական և տեղահանված կանայք, հաշմանդամություն ունեցող կանայք, գյուղաբնակ կանայք, սեռական և էթնիկ փոքրամասնություններ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանայք և այլ խոցելի խմբեր:

Գործունեության շրջանակը

- Սոցիալական ծառայություններ (խորհրդատվություն, դեպքերի վարում, ուղղորդում),
- Հոգեբանական խորհրդատվություն և թերապիա,
- Իրավաբանական խորհրդատվություն, իրավունքների պաշտպանություն և դատական ներկայացուցչություն,
- Ժամանակավոր ապաստանի աջակցություն (բնակարան, սնունդ, կենցաղային և հիգիենիկ պարագաներ),
- Ընտանեկան բռնության հարցերով 24/7 թեժ հեռախոսագիծ,
- Շտապ բուժօգնություն,
- Ուսումնական սեմինարներ ընտանեկան բռնության, կյանքի և ծնողավարության հմտությունների թեմաներով,
- Տնտեսական հզորացման ծրագրեր (սեմինարներ, ուսուցում, դրամաշնորհներ), Ընտանեկան բռնության և հարակից խնդիրների վերաբերյալ իրազեկման արշավներ:

Ք. Երևան,
Սեպուհի փ. 2/1
wsc.armenia@gmail.com
+374 60 525 535
+374 99 887 808 (Hotline)
www.womensupportcenter.org
WomensSupportCenter

Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատ

Փաստաբանների պալատը օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է:

Գործունեության շրջանակը

Ապահովում է պետության կողմից երաշխավորված, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ֆինանսավորվող անվճար իրավաբանական օգնության տրամադրում ապաստան հայցողներին և փախստականներին:

Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

- Բանավոր իրավաբանական խորհրդատվություն,
- Իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմում (դիմումներ, հայցադիմումներ),
- Ներկայացուցչություն վարչական մարմիններում և դատարաններում:

Ք. Երևան, Զաքյան փող., 7-2 շենք,
2-րդ հարկ
pashtpan@advocates.am
www.hpg.am
+374 10 600 714
+374 33 600 714

Հայկական Կարմիր Խաչի ընկերություն

Գործունեության շրջանակը

- Խորհրդատվության տրամադրում և ուղղորդում,
- Թարգմանչական ծառայությունների մատուցում,
- Տեղեկատվական հանդիպումների կազմակերպում և տեղեկատվական նյութերի տրամադրում,
- Մոնիթորինգային այցերի իրականացում սահմանային անցման կետեր և դասընթացների կազմակերպում սահմանապահների համար,
- Կառավարության հաստատած ծրագրին համահունչ՝ դրամական օգնության տրամադրում փախստականներին:

Ք. Երևան, Պարոնյան փող., շենք 21/1

arcs-pm@redcross.am

+374 60 625 050,
+374 60 625 063
+374 95 625 065
+374 55 625 065

www.redcross.am

Armenian Red Cross Society

Hotline: 8184

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

Գործունեության շրջանակը

- Փախստականների պաշտպանության կարիքների մշտադիտարկում և ուղղորդումներ,
- Սոցիալական ծառայություններ (խորհրդատվություն, աջակցություն արտակարգ իրավիճակներում, դեպքերի վարում),
- Իրավաբանական իրազեկման դասընթացներ փախստականների համար,
- Առողջապահություն (խորհրդատվություն, ուղղորդումներ, միջամտություններ, դեղորայքի տրամադրում, տնային այցելություններ խոցելի փախստականներին, առաջին օգնության տրամադրում, շահերի պաշտպանություն),
- Հոգեկան առողջություն և սոցիալ-հոգեբանական աջակցություն,
- Մարդասիրական օգնություն, ներառյալ՝ առաջին անհրաժեշտության պարագաներ խոցելի անձանց համար,
- Տնային խնամքի ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, առանց ընտանիքի աջակցության մնացած և տնից դուրս գալու անկարող կամ անկողնուն գամված անձանց համար,
- Դրամական աջակցություն ապաստան հայցողներին և փախստականներին,
- Ժամանակավոր կացարանի, ներառյալ՝ սոցիալական տների հասանելիության ապահովում,
- Քաղաքացիություն չունեցող անձանց և քաղաքացիություն չունենալու վտանգի տակ գտնվող անձանց նույնականացում և իրավաբանական աջակցություն (փաստաթղթավորում, ներկայացուցչություն դատարանում):

Ք. Երևան,
Գարեգին Նժդեհի փ. 42

www.missionarmenia.org

org@ngo.mission.am

+374 10 444 792
+374 77 705 157

MissionArmenia

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

Գործունեության շրջանակը

- ՄԱԿ ՓԳՀ թեժ գծի վարում, տեղեկությունների տրամադրում ՄԱԿ ՓԳՀ-ի և նրա գործընկերների գործունեության և աջակցության հասանելի ծրագրերի մասին,
- Փախստականների կարիքների բացահայտում և գնահատում, անհատական ինտեգրման պլանների մշակում, առաջընթացի դիտարկում,
- Հայոց լեզվի ուսուցում,
- Մասնագիտական ուսուցման և վերապատրաստման հասանելիության ապահովում,
- Աջակցություն աշխատանքի տեղավորման հարցում,
- Փախստականների ինտեգրմանն աջակցող ծառայությունների և հնարավորությունների քարտեզագրում (ներառյալ՝ իրավաբանական օգնություն, առողջապահություն, այլ),
- Համայնքային գործունեություն:

Ք. Երևան,
Լուսինյանց փ. 23

+374 10 541 844
+374 55 541 845

www.kasa.am/fr/

kasaam@kasa.am

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

«Ակցիա սովի դեմ» հիմնադրամ

ACTION AGAINST HUNGER

Գործունեության շրջանակը

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընտրված և ուղեգրված կոլեկտիվ կացարանների և սոցիալական տների պայմանների գնահատում,
- Սյունիքի և Վայոց ձորի մարզերում գտնվող, փախստականներով բնակեցված առանձնատների և բնակարանների սոցիալ-տեխնիկական վիճակի գնահատում,
- Կոլեկտիվ կացարանների, սոցիալական տների և առանձնատների հիմնանորոգման նախագծման և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում,
- Կոլեկտիվ կացարանների, սոցիալական տների և առանձնատների հիմնանորոգում,
- Սոցիալական համախմբման խթանմանը միտված համայնքային աջակցության ծրագրերի իրականացում:

Երևան, Վարդանանց
փող, 5Ա, բն. 60

+374 11 555 080
+374 77 203 708

mmaxfield@sc.acfspain.org
ghovhannisyan@sc.acfspain.org

www.accioncontraelhambre.org/en/europa/south-caucasus

Action Against Hunger South Caucasus

ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է գործընկերների և համայնքների հետ՝ պաշտպանելու և աջակցելու այն մարդկանց, ովքեր բռնի տեղահանված են՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել խոցելի փախստականներին և ապաստան հայցողներին: ՄԱԿ ՓԳՀ-ի առաջնային գործառույթը Հայաստանում փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և բարեկեցության պաշտպանությունն է և կայուն լուծումների ապահովումը:

Լրացուցիչ տեղեկությունների կամ կարծիք հայտնելու համար խնդրում ենք զանգահարել ստորև ներկայացված ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան թեժ գծին:

ՄԱԿ ՓԳՀ թեժ գիծ (անվճար)՝
0 8000 0025

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,
0010, Պետրոս Ադամյանի փ. 14

unhcr.org/am
help.unhcr.org/armenia/

armyeprt@unhcr.org

UNHCR Armenia

AG 26.08.2024